

THE LINGUOSTYLISTIC CHARACTERISTICS OF TSERENTS'S HISTORICAL NOVELS

LEVON (FATHER NERSEH) ALOYAN

PhD Candidate at the Chair of History of Armenian Literature
after Hr. Tamrazyan

DOI: 10.54503/2579-2903-2022.1-52

Abstract

Considering the fact that the linguostylistic characteristics of Tserents's works have not been studied thoroughly, this study aims to fill in that gap, shedding a light on the language, linguistic peculiarities and modes of expression which contribute to the creation of the unique language and style of his historical novels "Toros, Son of Levon," "Travails of the 9th Century," and "Theodoros Rshtuni." Since all the three novels share linguistic similarities, they are not examined here separately, but in unity.

The language of Tserents's novels is emotional, colorful and expressive. He was able to attach a specific color and shade to a single word and sentence, presenting the characters of his novels and their deeds under a unique light through the use of rich linguistic means and figures of speech. The significance of the events and ideas that are described in his novels are reflected in his great use of metaphors and similes. When describing the characters of his novels, Tserents tends to praise their patriotic deeds in such a way that the readers can easily envision them. Although Tserents's novels are set out in different historical periods, they have many similarities in terms of linguostylistic structure. One can notice similarities between his novels' subjects, ideas, linguostylistic and typological traits. Using his creativity and linguistic competence, Tserents was able to recreate the events and occurrences of specific historical periods by using various images and linguistic means of expression to communicate the described events to his readers. The characters of his novels are impressive and determined, reflecting the epoch.

The novelist was well aware of the linguostylistic means of both old and new Armenian, as well as of dialects and idioms, using the rich vocabulary of the language, sometimes creating new words and attaching new connotations to those. Tserents also mastered the art of using linguostylistic means, old Armenian words, archaisms, and idioms typical to the historical period in which his novels are set. Tserents's novels contain old Armenian words and expressions, which, apart from carrying important connotations, also allow the reader to imagine a specific historical setting. Still, his use of too many archaisms and stylistic means, as well as whole passages and sentences taken from the writings of historians reduce the linguistic value of his novels. As a result, Tserents's novels become difficult to read and to grasp for the reader.

Tserents's novels also indicate that he was knowledgeable about church ceremonies, prayers, and ways of greeting the clergy.

This study is an academic and theoretical generalization of the linguostylistic characteristics of Tserents's novels, and it may be of interest to linguists engaged in stylistics, and philologists at large.

Keywords and phrases: Tserents, historical novel, language and style, unique style, work of fiction, vocabulary, lexicon, archaisms, linguostylistic peculiarities.

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԵՎՈՆ (ՆԵՐՍԵՀ ԱԲԴ.) ԱԼՈՅԱՆ

Հր. Թամրազյանի անվան հայ գրականության
պատմության ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծերենց վիպասանի լեզվա-
ոճական առանձնահատկությունները պատշաճ խորությամբ չեն ուսում-
նասիրվել, ներկա հրապարակմամբ ջանացել ենք ուսումնասիրել նրա
«Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմա-
վեպերի լեզուն, դրանց առանձնահատկություններն ու արտահայտման եղա-
նակները, որոնք ստեղծում են գեղարվեստական լեզու և անհատական ոճ:
Քանի որ երեք վեպերն էլ ունեն լեզվական ընդհանրություններ, այդ ստեղ-
ծագործությունները քննում ենք ոչ թե առանձին-առանձին, այլ ընդհանուր,
միասնական կերպով:

Ծերենցի վեպերի լեզուն ունի հուզական երանգավորում, գունագեղ է,
կոլորիտային և արտահայտիչ: Նա յուրաքանչյուր բառին, նախադասու-
թյանը հաղորդել է համապատասխան գույն ու երանգ, իր հերոսների
անձնագույն գործունեությունը ներկայացրել լեզվական երանգավորումով,
գեղարվեստական հարուստ միջոցներով: Հեղինակի նկարագրած երևույթ-
ների վեպությունն ու վիթխարի նշանակությունն արտահայտվում են նրա
համեմատությունների, փոփոխությունների և մակդիրների վարպետ ընտ-
րության ու օգտագործման միջոցով: Իր ստեղծագործություններում գլխա-
վոր կերպարներին բնորոշելիս Ծերենցն այնպիսի խոսքերով է դրվատում
նրանց հայրենանվեր գործունեությունը, որ ընթերցողն առանց երկմտելու
կարողանում է պատկերացում կազմել բնութագրվող անձի մասին: Տարբեր
պատմաշրջաններ ընդգրկող նրա վեպերը լեզվաարտահայտչական
կառուցվածքի տեսակետից ունեն նկատելի ընդհանրություններ. նման են
թե՛ թեմատիկայով, թե՛ շոշափած գաղափարներով, թե՛ լեզվի և ոճավորման
արվեստի օգտագործած հետաքրքիր հնարներով և թե՛ տիպականացման
արվեստի բնորոշ կողմերով: Ծերենցն իր ստեղծագործական մտահղա-
ցումներով, լեզվական կարողություններով գեղարվեստորեն վերամարմ-
նավորել է պատմական դարաշրջանում տեղի ունեցող դեպքերն ու
իրադրությունները, ստեղծել բազմաթիվ գեղարվեստական պատկերներ,
խոսքի զանազան միջոցներով նկարագրած երևույթները հասցրել
ընթերցողներին՝ նրանց երևակայության մեջ առաջացնելով պատմակա-
նության պատրանք: Նրա ստեղծած պատկերները չափազանց հետաքրքիր
և նպատակասլաց են, դրանք իրենց պատկերացման մեջ իմաստավորում
են բնութագրվող դարաշրջանը:

Վիպասանը քաջաճանոթ է եղել հայ հին և նոր գրական լեզուների արտահայտչամիջոցներին, բարբառներին, դարձվածքներին և օգտագործել է այդ լեզուների հարուստ բառապաշարը, երբեմն ինքն էլ ածանցման և բառաբարդման միջոցով ստեղծել է նոր բառեր, տվել այդ բառերին նոր իմաստներ: Ծերենցը վարպետորեն կարողացել է կիրառել պատմական դարաշրջանի հասարակական կյանքի համար էական, բնորոշ, միջավայրին համապատասխան լեզվաոճական արտահայտչաձևեր, գործածել է գրաբարյան բառեր, դարձվածքներ, արխայիզմներ: Ճիշտ է՝ գրողի վեպերում կան գրաբարյան այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք ունեն էական և նշանակալից իմաստ՝ ընթերցողի երևակայության մեջ պատմականության պատրանք առաջացնելու առումով, բայց և այնպես վիպասանի երկերում այնքան շատ են անհարկի գործածված գրաբարյան բառերն ու ոճական արտահայտությունները, պատմիչների երկերից թափանցված ամբողջական հատվածներն ու նախադասությունները, որ իջեցնում են գրողի պատմական երկերի լեզվական արժեքը. ավելին՝ ընթերցող լայն շրջանների համար նրա վեպերը դարձնում են դժվարընթեռնելի և դժվարամարս:

Ծերենցի բոլոր վեպերում ցայտուն երևում է, որ նա քաջաճանոթ է եղել եկեղեցական բոլոր արարողություններին, աղոթքներին, հոգևորականներին դիմելու ձևերին:

Ուսումնասիրությունը գիտական և տեսական ընդհանրացում է Ծերենցի վեպերի լեզվաոճական առանձնահատկությունների մասին, որը կհետաքրքրի ոճաբանությամբ զբաղվողներին և բանասերներին:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Ծերենց, պատմավեպ, լեզու և ոճ, գեղարվեստական երկ, բառապաշար, հնաբանություն, լեզվաոճական առանձնահատկություններ:

ЛИНГВИСТИЧЕСКИЕ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ В ИСТОРИЧЕСКИХ РОМАНАХ ЦЕРЕНЦА

ЛЕВОН (АРХИМАНДРИТ НЕРСЕ) АЛОЯН

соискатель кафедры армянской литературы имени Гр. Тамразяна

Аннотация

Учитывая то обстоятельство, что лингвистические и стилистические особенности поэта Церенца не изучены должным образом, в этой публикации мы постарались изучить язык таких исторических романов, как «Горос Левони», «Рождение 9-ого века» и «Теодорос Рштуни», их особенности и вариации их проявления, которые создают художественный язык и особый стиль. Так как эти три романа имеют общие лингвистические особенности, мы анализируем их вместе, а не по отдельности.

Язык романов Церенца имеет чувственный окрас, он многообразен, колоритный и выразительный. Каждому слову, предложению он придал соответствующую «краску» и фон, а героическую деятельность своих героев показал лингвистическим окрасом и богатыми литературными приемами. Сакральность и грандиозность явлений, которые описывает автор, проявляются в тех сравнениях, изменениях и эпитетах, которые применил мастер.

Описывая главных героев своих произведений, Церенц такими словами восхваляет их, что читатель без труда может составить мнение об описуемых персонажах. Его романы, которые соединяют разные эпохи, имеют общие лингвистические и стилистические черты: они похожи и тематикой, и использованными идеями, и языком, и интересными методами стиля, и типологическими аспектами. Церенц своими идеями, языковыми навыками художественно описал события и эпизоды, которые имели место в разные исторические периоды, создал много художественных «картин», передал их читателям с помощью своих лингво-стилистических навыков, создавая у них иллюзию историчности. Созданные им персонажи интересные и целеустремленные, которые в их же понимании воссоздают описываемому эпоху. Писатель отлично владел литературными приемами ново и древнеармянского языка, диалектов, оборотами, используя их богатый словарный запас, а иногда с помощью сопоставления и словообразовательных дериваций сам создавал новые слова, давая этим словам новый смысл. Церенц мастерски сумел использовать лингвистические и стилистические словосочетания, древнеармянские слова, обороты, архаизмы, которые были присущи описываемому историческому периоду.

Надо отметить, что в романах писателя есть такие древнеармянские слова и словосочетания, которые имея значительную смысловую значимость, в восприятии читателя восполняют чувство историчности, но и вместе с тем, в произведениях романиста так много необоснованных древнеармянских слов и словосочетаний - целые куски и предложения из произведения историков средневековья, что это обстоятельство местами снижает литературную значимость исторических романов автора, ибо делает эти произведения для читателей трудночитаемыми и труднопонимаемыми.

Во всех романах Церенца четко видно, что он обстоятельно знаком со всеми церковными ритуалами, молитвами, формами обращения к священникам.

Данное исследование представляет собой научно-теоретическое обобщение лингво-стилистических особенностей романов Церенца, которое может заинтересовать специалистов в области стилистики и филологов.

Ключевые слова и словосочетания: Церенц, исторический роман, язык и стиль, особенный стиль письма, художественное произведение, словарный задел, археография, лингвистические особенности.

Որևէ գրողի լեզուն և ոճն ուսումնասիրելիս առաջին հերթին նկատի պետք է ունենալ նրա ստեղծագործության առանձնահատուկ և ինքնատիպ կողմերը՝ արտահայտած գաղափարները, արծարծած խնդիրները, նախընտրած թեմայի ու սյուժեի ստեղծման հիմնական սկզբունքները, ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները և այլն: Նման ուսումնասիրությունների մեջ «լեզու և ոճ» հասկացությունները կողք կողքի պարտադիր զուգահեռվում են, քանի որ դրանք գրողի անհատականությունը դրսևորող, իրար հետ անբաժանելիորեն կապված երկու կարևոր գործոններ են: Ինչպես նկատում է Լ. Եզեկյանը՝ «գեղարվեստական երկի լեզվի քննությունն ի վերջո հանգեցնում է նրա ոճի ուսումնասիրությանը, քանի որ ամեն մի գրող որքան ինքնատիպ է իր մտածողությամբ ու լեզվով, նույնքան անհատական է իր ոճով, որով էլ հենց ամենից առաջ տարբերվում է մյուսներից» [4, էջ 263]:

Գրողի ոճի ինքնատիպությունն արտահայտվում է նրա ստեղծագործությունների միջոցով. թե տվյալ գրողը կյանքի ո՞ր բնագավառների վրա է բևեռել իր ուշադրությունը՝ պատմական, թե՞ արդիական, ինչպիսի՞ հարցեր է շոշափել, ի՞նչ խնդիրներ է արծարծել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծերենց վիպասանի լեզվաոճական առանձնահատկությունները պատշաճ խորությամբ չեն ուսումնասիրվել, ներկա հրապարակմամբ ջանացել ենք ուսումնասիրել նրա «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերի լեզուն, դրանց առանձնահատկություններն ու արտահայտման եղանակները, որոնք ստեղծում են գեղարվեստական լեզու և անհատական ոճ:

Ծերենցն իր վեպերում գեղարվեստորեն վերարտադրել է պատմական հեռավոր անցյալը, ցույց տվել հայ ժողովրդի կյանքի ճշմարիտ պատկերը, ստեղծել բազմաթիվ նորանոր դրվագներ, տվել հայ իրականության մեջ գոյություն ունեցող դասակարգային հարաբերությունների ճշմարտացի նկարագրությունը: Գրողի ոճի յուրահատկությունը դրսևորվում է նաև կերպարակերտման արվեստի մեջ:

Ծերենցն իր ստեղծագործություններում գլխավոր կերպարներին բնորոշելիս այնպիսի խոսքերով է դրվատում նրանց հայրենանվեր գործունեությունը, որ ընթերցողն առանց երկմտելու կարողանում է պատկերացում կազմել բնութագրվող անձի մասին: Նրա հերոսները

հանդես են բերվել իբրև պետական և քաղաքական խոշոր գործիչներ, դիվանագետներ, որոնք հարևան պետությունների և կամ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելիս խոսել են իրենց հատուկ ոճով ու պատշաճ լեզվով:

Բայց ի՞նչ ենք հասկանում լեզու և ոճ ասելով: Կարելի՞ է արդյոք այդ երկու հասկացությունները նույնացնել իրար: Իհարկե, ո՛չ:

Ինչպես նկատում է գրականագետ Զ. Ավետիսյանը. «Լեզուն գրողի համար այն նյութն է, միջոցը, որից և որով արարվում է գեղարվեստական ստեղծագործությունը, իսկ ոճը հեղինակի գեղարվեստական մտածողության դրսևորումն է իր անկրկնելիության մեջ» **[1, էջ 158]:**

Գրողի ոճն անհատականացված երևույթ է. ամեն գրող ունի իր ինքնատիպ ոճը, ստեղծագործությունները շարադրում է այնպիսի ոճով, որն օրինաչափ է միայն իրեն, իր կիրառած ոճական միջոցներով նա միանգամայն տարբերվում է միևնույն լեզվով ստեղծագործող մյուս հեղինակներից:

Մինչդեռ լեզուն ավելի ընդհանրացած հասկացություն է: Տարիների ընթացքում հայոց լեզվի բառային կազմը և քերականական կառուցվածքն աստիճանաբար փոփոխության է ենթարկվել, այն մշակվել և հարթվել է, համալրվել նորանոր բառերով, կազմել մի ընդհանուր ամբողջություն, որով ստեղծագործել են մեր գրողները՝ կիրառելով իրենց ստեղծագործական խառնվածքին, մտածելակերպին և աշխարհայացքին համապատասխան ոճ: Լեզվի և ոճի տարբերությունը հետևյալ կերպ է բնորոշել Ալ. Շիրվանզադեն. «Լեզուն ընդհանուր երևույթ է, ոճը՝ մասնավոր: Լեզուն կազմվում է ամբողջ ազգի հոգեկան, մտավոր, պատմական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ամբողջությունից», այլ կերպ ասած, «ոճը ինքը հեղինակն է, լեզուն ինքը ազգն է» **[8, էջ 186-187]:** Իսկ Ծերենցը ոճի մասին գրում է. «Ոճը մտածության արտահայտության արտաքին ձև է, որը զգալի կընե գաղափարները կամ զգացմունքները, որ ծածկյալ էին ի մեզ»: «Ոճը կարգն է, որ պետք է դնել մտածության մեջ: Երբ նոքա լավ կապվին, սեղմվեն իրերոց, ոճը կլինի հզոր, կորովի և համառոտ: Իսկ ընդհակառակն ծանր և դանդաղ բառերն իրար հաջորդեն, ինչչափ շքեղ լինեն, ոճը կլինի ճապաղ, թույլ և գետնաքարշ» **[3]:**

Ասել է թե՛ Ծերենցը ոճը համարում է գրողի ստեղծագործության գաղափարական բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների արտահայտման ձև: Որքան սերտ լինի նրանց միությունը, այնքան ավելի պարզ և հստակ կլինի գրողի ոճը. «Կան այնպիսիները, որոնք ճիշտ կմտածեն, բայց ճշտությամբ չեն արտահայտեր մտքերը»: «Գեղեցիկ պատկերները, իրավացիորեն նկատում է Ռ. Նանումյանը, չեն կարողանում ծառայեցնել իրենց նպատակին: Գեղարվեստական պատկերը ճիշտ արտահայտելու համար կարևոր նշանակություն ունի լեզուն, նրանով

միայն կարելի է որոշել գրողի գեղարվեստական մտածողության արտահայտչականության չափը» [7, էջ 147]:

Յուրաքանչյուր գրողի ստեղծագործություն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, թե տվյալ գրողն իր երկում արտահայտչական ինչպիսի միջոցներ է կիրառել, գեղարվեստական ինչպիսի ձևեր է օգտագործել դեպքերն ու իրադրությունները պատկերավոր լեզվով արտահայտելու համար և, որ ամենակարևորն է, գեղարվեստական ինչ մեթոդով է ստեղծագործել: Սովորաբար ռոմանտիկ գրողների երկերում հանդիպում ենք այնպիսի երևույթների, որոնք հուզում են ընթերցողին, ձգտում առաջացնում նրանց հոգիներում՝ տեսնելու և ընդօրինակելու լավը, գեղեցիկը, վեհը: Ռոմանտիկների ստեղծագործությունները հարուստ են համեմատություններով, փոխառություններով և մակդիրներով, նրանց լեզվաոճական արտահայտությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում խոսքի երաժշտականությունը:

Ինչպես ռեալիստ, այնպես էլ ռոմանտիկ գրողն իր ստեղծագործությունները հեղինակելիս օգտվում է ժողովրդական լեզվի հարուստ գանձարանից, վերցնում է այնտեղից այն լավագույնը, որը համապատասխանում է իր ստեղծագործական խառնվածքին և գաղափարական նպատակադրմանը: Գրողը ժողովրդական լեզվից վերցնում է այնպիսի ձևեր, ընտրում այնպիսի բառեր, որոնց գեղարվեստական մշակման ենթարկելով, ձևավորում, հղկում, գեղեցկացնում է դրանք և նոր կիրառում իր ստեղծագործությունների մեջ՝ հարստացնելով և ճոխացնելով այն լեզուն, որով ստեղծագործում է ինքը: Ժողովրդական լեզվի արտահայտչամիջոցների օգտագործմանն առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դասական գրողները. «Խոսքեր ու ձևեր կան, որ իրենց մեջ ամբողջ պատմություններ են պարունակում,- գրել է Հովհ. Թումանյանը,- էդ տեսակ խոսքերը միայն հանճարները կարող են գրել, մին էլ ժողովուրդները, որ հազար-հազար աչքերով, հազար-հազար ականջներով, հազար-հազար խելքերով երկար դարերի ընթացքում նայում, լսում, քննում ու դատում են կյանքը ու վերջը հանում մի կարճ եզրակացություն, իրենց որոշումը մի բացականչությունով, մի ածականով կամ մի դարձվածքով» [9, էջ 398]: Գրականության լեզուն և ոճը կենդանի պահելու համար Ամենայն հայոց բանաստեղծը հենվել է ժողովրդական լեզվի հենց այդ խոսքերի ու ձևերի վրա:

Պատմական կոլորիտ ստեղծելու համար Ծերենցն իր վեպերում կիրառել է գեղարվեստական բազմաթիվ միջոցներ, որոնցից ամենանշանակալիցը նրա ստեղծագործությունների լեզուն է: Երբ հանգամանորեն ուսումնասիրում ենք նրա վեպերը, տեսնում ենք, որ վիպասանը քաջաձանդ է եղել հայ հին և նոր գրական լեզուների արտահայտչամիջոցներին, բարբառներին, դարձվածքներին: Նա օգտագործել է այդ լեզուների հարուստ բառապաշարը, երբեմն ինքն էլ ածանցման և

բառաբարդման միջոցով ստեղծել է նոր բառեր, տվել այդ բառերին նոր իմաստներ: Ծերենցը վարպետորեն կարողացել է կիրառել պատմական դարաշրջանի հասարակական կյանքի համար էական, բնորոշ, միջավայրին համապատասխան լեզվաոճական արտահայտչաձևեր: Հայ պատմավիպասանների (Ծերենց, Րաֆֆի, Մուրացան, Ստ. Զորյան, Դ. Դեմիրճյան) ստեղծագործությունների խորագին ուսումնասիրումը ցույց է տալիս, որ վերոհիշյալ արձակագիրները, իրենց երկասիրություններում օգտագործելով ժողովրդական լեզվի ընձեռած հարուստ միջոցները, պատմական դարաշրջանի ռեալիստական վերարտադրությունը տվել են գրական լեզվի, գրաբարի, բարբառների և օտար լեզուներից վերցրած բառերի հմուտ օգտագործման միջոցով՝ նպաստելով հայոց գեղարվեստական գրականության և գրական լեզվի զարգացման մեծ գործին:

Ծերենցի՝ տարբեր պատմաշրջաններ ընդգրկող վեպերը լեզվաարտահայտչական կառուցվածքի տեսակետից ունեն նկատելի ընդհանրություններ. նման են թե՛ թեմատիկայով, թե՛ շոշափած գաղափարներով, թե՛ լեզվի և ոճավորման արվեստի օգտագործած հետաքրքիր հնարներով և թե՛ տիպականացման արվեստի բնորոշ կողմերով: Նկատի ունենալով Ծերենցի վեպերի լեզվական ընդհանրությունները՝ մենք այդ ստեղծագործությունները քննում ենք ոչ թե առանձին-առանձին, այլ ընդհանուր, միասնական կերպով: Ծերենցի վեպերի լեզուն ունի հուզական երանգավորում, գունագեղ է, կոլորիտային և արտահայտիչ: Նա յուրաքանչյուր բառին, նախադասությանը հաղորդել է համապատասխան գույն ու երանգ, իր հերոսների անձնագծի գործունեությունը ներկայացրել լեզվական երանգավորումով, գեղարվեստական հարուստ միջոցներով:

Հեղինակի նկարագրած երևույթների վեհությունն ու վիթխարի նշանակությունն արտահայտվում են նրա համեմատությունների, փոփոխությունների և մակդիրների վարպետ ընտրության ու օգտագործման միջոցով: Ծերենցի կիրառած համեմատություններն ու փոխաբերություններն արտահայտիչ են, դիպուկ. դրանք հեղինակի խոսքի զանազան հնարներով ստեղծված այնպիսի լեզվաարտահայտչական միջոցներ են, որ նկարագրվող առարկան կամ երևույթը դարձնում են պարզ ու որոշակի, որն անմիջապես հասցվում է ընթերցողին՝ վերջինիս մոտ առաջացնելով զգայական ընկալում: Ծերենցն իր գլխավոր գործող անձերի քաջությունն ու անվեհերությունը շեշտակի և դիպուկ կերպով բնորոշելու համար նրանց համեմատում է զանազան կենդանիների հետ: Օրինակ՝ «*Խեղճ երիտասարդ մը իրոք առյուծ էր, կորյուն, առյուծու,*» ասում է Թորոս իշխանը Բաբկեն հայրիկին, - *իմ եղբայրս, իմ Ռուբենս, ճիշտ այսօրվա տարիքս ուներ, առյուծի ուժ, առյուծի սիրտ ուներ*» («Թորոս Լևոնի» էջ 14) [5]: «*Ամեն մեկը մեյմեկ ցուլ դարձան, ուժովացան, գնացին ամեն տեղ առին*» (նույն տեղում, էջ 19): «*Վերջը Լևոն Կիլիկիո ազատարարն և առյուծն եղավ*» (նույն տեղում, էջ 22): «*Բավական է, որ սա ինկաձներուն մեջ ան անպիտան մեծաբանն ալ գտնվի*՝

որ չէր հավատար թե, որ առյուծու կորյունն միշտ առյուծ է» (նույն տեղում, էջ 48): «Աղվե՛ս, կա՛ց,- ըսի,- առյուծին ձագը տեսա՛ր» (նույն տեղում, էջ 51): «Ձախ կողմը պունեցիք առյուծի պես կպատերազմեին» («Երկունք», էջ 338): «Սասնո լեռանց գայլը», «Սասնո լեռանց առյուծը» տեսանք կըսեին (նույն տեղում, էջ 379):

Ինչպես տեսնում ենք, վերոբերյալ բոլոր օրինակներում հեղինակն իր հերոսներին համեմատում է առյուծի, կորյունի, գայլի՝ այդ ամենաուժեղ կենդանիների հետ՝ ավելի պարզ և որոշակի ընդգծելու համար կոնկրետ համեմատվող անձի ուժն ու հզորությունը:

Ծերենցի վեպերն ուսումնասիրելիս տեսնում ենք, թե գրողը որքան կրքոտ ու այրող ատելությամբ էր լցված հայ նախարարների և իշխանների վարած հակաժողովրդական, դավաճանական գործունեության նկատմամբ, թե ինչպես հոգու ամբողջ ուժով նզովում էր նրանց՝ բացահայտելով նրանց արարքների անմարդկային էությունը: Չափազանց բնորոշ և տիպական են նախարարներին բնութագրող հետևյալ համեմատությունները. «Մի՞թե իմ պապերս, Ռուբեն, Կոստանդին, հորեղբայրս Թորոս և հայրս Լևոն, թե որ ուզեին, թե որ խնդրեին հունական արծվույն սոթարած թևերուն տակ մտնել լամբրոնական Օշիններու, Հեթումներու պես ուրանալով հայության իրավունքը, հայրենյաց և ազգության սերը» («Թորոս Լևոնի», էջ 15): Կամ՝ «Ինձ ավելի սիրելի է այդ անարգ, մոլի և անպիտան նախարարաց գլուխը կործանել իրենց գահույքը՝ այդ դարավոր բազմագլխյան վիշապը, որ նախարարություն կանվանեն, ջնջել, անհետ ընել, որ Հայաստան գլուխ մը միայն ունենա և ժողովուրդ մը և լինի մի հոտ և մի հովիվ» («Երկունք», էջ 372): Երկու դեպքում էլ հեղինակը խիստ քննադատության է ենթարկում «մոլի» և «անպիտան» նախարարներին՝ համարելով նրանց «բազմագլխյան վիշապ», այստեղ բացահայտ կերպով զգացվում է հեղինակի արհամարհանքն ու հակակրանքը այդ դասի նկատմամբ:

Նախարարներին նկարագրող համեմատություններից բացի՝ Ծերենցի վեպերում կան նաև հոգևորականությանը բնութագրող այնպիսի համեմատություններ, որոնք ընդգծում են նրանց տգիտությունն ու ընչաքաղցությունը, օտարի առաջ սողալու նրանց հատկությունը, հարստություն դիզելու մոլուցքը: Այսպես, օրինակ՝ «նայե տերտերներուն աչքին, դժոխքի ճրագ կը նմանի, գիտես թե սատանան մեջը կը պլպլա» («Թորոս Լևոնի», էջ 19): «Անոնց լավը սուրբ է, բայց գեշը սատանայեն ալ վատ է» (նույն տեղում, էջ 20): «Պեպք չէ մոռնալ թե որովայնապարար և խաբեբա եկեղեցականաց քով կան գործոնյա և աշխատասեր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը և ժողովուրդը կսիրեն և գիտեն նաև զիրենք անոնց համար զոհել» (նույն տեղում, էջ 95-96): «Այդ Եզր կաթողիկոսը Թադևոսե, Բարդողիմեոսե, Լուսավորչո լա՛վ գիտե հայությունը, քրիստոնեությունը. մեղա աստծու, մենք Լուսավորչա դավանությունը թողո՞ւնք, որովհետև այդ Եզր Կողբաց աղեհանք կը սեփականացնե, աստված հեռի ընե, ինքն աղն ուրե և մեզ

աղու փա» («Թեոդորոս Ռշտունի», էջ 605): Ծերենցի վեպերում կան նաև համեմատություններ, ուր հեղինակը առանց ավելորդությունների բացահայտում է արյունարբու և գիշատիչ Բուդայի հրեշավոր դիմանկարը: «Այս խոսքերը զրուցելով՝ վագրը աղոթյալները կը կրճարեր և թունավոր աչքեր կը փայլեցներ դիմացնին» («Երկունք», էջ 377): «Եվ իր աչքերը այնպես բոցավառ էին և շանթագին, որ Բուդա վագրն անգամ ականա սարսուռ մը զգաց, և հրամայեց հանել իր երեսեն այդ մարդը՝ բանփ փանհիլ և կրկին շղթայներով ամրացնել. մահ սպառնալով ամենուն՝ եթե հանկարծ փախչեր ազատեր» (նույն տեղում, էջ 378):

Բուդայի վերաբերյալ օգտագործված համեմատությունները շատ բնորոշ և դիպուկ են մարդ-գազանի ամբողջ էությունը բացահայտելու համար:

Ծերենցը ծնվել էր կաթոլիկ ընտանիքում, հայրը հետագայում նրան ուղարկել էր Ս. Ղազար՝ Մխիթարյանների մոտ սովորելու: Հոգևոր դպրոցի յուրաքանչյուր սան պարտավոր էր ուսումնասիրել եկեղեցու պատմություն, քրիստոնեության պատմություն, գրաբար, լատիներեն և հունարեն լեզուները: Տիրապետող լեզուն գրաբարն էր, Մխիթարյան հայրերը անգիր անել էին տալիս գրաբար ճառեր, ոտանավորներ, հատվածներ Սուրբ գրքից, նրանք աշակերտներից պահանջում էին խոսել գրաբարով՝ որպես «աղբյուր բարբառի հայրենական»: Աշակերտների գիտելիքները գնահատվում էին նրանով, թե նրանք ինչպես են անգիր արտասանում օրվա եկեղեցական աղոթքներն ու սահուն կարդում որոշ հատվածներ Աստվածաշնչի գլուխներից:

Թեև Ծերենցի կյանքը Մխիթարյան վանքում անցել է միապաղաղ. ամեն առավոտ աշակերտները գնացել են եկեղեցու մատուռը «Հավատով խոստովանիմ» և «Ողջույն քեզ» աղոթքները արտասանելու, սակայն այնտեղ ստացած եկեղեցական-կրոնական գիտելիքները վառ արտահայտվել են նրա բոլոր վեպերում: Ծերենցը քաջածանոթ էր եկեղեցական բոլոր արարողություններին, աղոթքներին, հոգևորականներին դիմելու ձևերին, եկեղեցասեր էր ու աստվածավախ. «Ամենեն ապահով տեղ տեսնվելու համար հայ եկեղեցին կրնա լինիլ...» («Թորոս Լևոնի», էջ 31), «Աստված օգնական, հայր սուրբ», «Աստված պահապան, որդյակ» (նույն տեղում, էջ 58), «Ազատություն եղբարց մերոց գերելոց»¹ (նույն տեղում, էջ 63): «Հունաց լրբության չափը անցավ ամեն տեղ, ամեն հարստահարությանց, ամեն բռնությանց, ամեն նախադանաց ենթակա եղավ մեր ազգը. մեր եկեղեցին, մեր խաչն ու ավետարան կհայհոյեն, չի կրցանք հասկցնել այս ամբարտապան ազգին թե խաչ և ավետարան միևնույն է ամեն քրիստոնյայի համար. տերն ինք այց ընե մեր փառապալ ազգին» (նույն տեղում, էջ 72), «Երբքը իջան եկեղեցին, «Տեր ուղղյան» ըսին»² (նույն տեղում, էջ 73), «Փառք

¹ Նույնը կրկնել է նաև «Երկունք»-ում, էջ 381:

² Ճանապարհ գնալու աղոթք:

քեզ, տեր, փառք քեզ, հաղագս ամենայնի, տեր, փառք քեզ» («Երկունք», էջ 299), «Բարի եկա՛ր, հայր սուրբ, մեր սեղանը օրհնելու» («Թորոս Լևոնի», 95), «տերտերն «ողորմյա» կըսե, թողություն կու տա» (նույն տեղում, 114): Մեջքերումներ է արել նաև Աստվածաշնչից. «ոչ ազատ կա և ոչ ծառա՝ այլ ամենայն ոք մի ի Քրիստոս Հիսուս» («Երկունք», էջ 285), կամ «Տուն իմ տուն աղոթից կոչեսցի, և դուք արարիք զդա այրս ավազակաց»³ (նույն տեղում, էջ 307), «Խնդրեսցիք և տացի ձեզ, հայցեցեք և գրջիք, բախեցեք և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրե՛ առնու և որ հայցե՛ գտանե և որ բախե՛ բացցի նմա»⁴ («Թեոդորոս Ռշտունի», էջ 375), «Մի՛ արկանեք զմարգարիտս ձեր առաջի խոզաց»⁵ (նույն տեղում, էջ 509): Անդրադարձել է մինչև անգամ կաթողիկոսի անունը պատարագի ընթացքում հիշատակելու արգելքին (նույն տեղում, էջ 107), ինչպես նաև Պողոս՝ «գլխավոր առաքյալ»-ին և Պետրոս՝ ուրացողին:

Ծերենցի լեզվաոճական կարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ նա իր ստեղծագործական մտահղացումներով, լեզվական կարողություններով գեղարվեստորեն վերամարմնավորել է պատմական դարաշրջանում տեղի ունեցող դեպքերն ու իրադրությունները, ստեղծել բազմաթիվ գեղարվեստական պատկերներ, խոսքի զանազան միջոցներով նկարագրած երևույթները հասցրել ընթերցողներին՝ նրանց երևակայության մեջ առաջացնելով պատմականության պատրանք: Նրա ստեղծած պատկերները չափազանց հետաքրքիր և նպատակասլաց են, դրանք իրենց պատկերացման մեջ իմաստավորում են բնութագրվող դարաշրջանը: Գրողի երկերում կան այնպիսի սրտաճմլիկ պատկերներ, որոնք հուզում են ընթերցողին, արհամարհանքի զգացում առաջացնում նրանց սրտերում օտարերկրյա նվաճողների և երկրի ներքին թշնամիների նկատմամբ: Բերենք մի հատված Հայաստանի ծանր վիճակը պատկերող նկարագրությունից. «Ինչ անհատնում և քարակոփ գերեզմաններ, և ինչ բարբարոս և սեղանակապուր ժողովուրդք անցեր էին հոնկից. գերեզման մը չի կար, որու կափարիչը խախտած չլիներ, կային գերեզմանք չորս բարձր սյուներու վրա հաստապրված, բայց անբարիշտ և գերեզմանակրկիտ ձեռքը հոն ալ հասեր էր և ահագին միակտուր երեք կանգուն և ավելի մեծ կափարիչը խախտեր էր, աճյունն ու ոսկորը ցրվեր էր: Երկայն մղոններ աս տեսարանը կը շարունակվեր» («Թորոս Լևոնի», էջ 76): Այստեղ, ինչպես տեսնում ենք, հեղինակը ստեղծել է մի իրական պատկեր՝ մոայլ գույներով, ավեր ներկայով: Վիպասանը ցնցող պատկերներով ցույց է տալիս, որ երբեմնի փառքի և հզորության Հայաստանն այժմ տառապում է բռնության լծի տակ, որ բարբարոսների ասպատակությունների ժամանակ ոչ միայն կենդանի ժողովուրդն էր ոչնչանում, այլև գերեզմաններում թաղված մեռելների

³ Մարկոս ԺԱ:17:

⁴ Ղուկաս ԺԱ:9:

⁵ Մատթեոս Է:6:

կմախքներն իսկ անգամ տրորվում էին թշնամու ձիերի սմբակների տակ և ցրվում աշխարհով մեկ:

Գեղարվեստական երկի լեզվաոճական արտահայտչական կարևոր միջոցներից է փոխաբերությունն ու մակդիրը: Ծերենցի վեպերը բավական հարուստ են բառային այդ պատկերներով: Հեղինակն իր նկարագրած դեպքերն ու դեմքերը պատկերավոր լեզվով արտահայտելու համար կատարել է բառերի և առանձին արտահայտությունների ընտրություն՝ համապատասխանեցնելով դրանք բնութագրվող դարաշրջանի, գործող անձանց միջավայրին և նրանց գործունեությանը: Որքան դիպուկ և ճշմարիտ է օգտագործված մակդիրը, այնքան ավելի արտահայտիչ և տպավորիչ է այն, այնքան ավելի կոնկրետ է բնորոշում այս կամ այն առարկան կամ երևույթը: Փոխաբերությունների և մակդիրների լայն օգտագործումը հնարավորություն է տալիս Ծերենցին ստեղծելու կոլորիտ, կենդանություն հաղորդել բնութագրվող առարկային, գործողությանը, նկարագրվող երևույթին: Օրինակ՝ «Ո՛հ իմ սև լեռան պայծառ արև, երբ քու սև ժայռերուդ վրա պիտի կանգնիմ» («Թորոս Լևոնի», էջ 14): Այս նախադասության մեջ «սևը» օգտագործված է իբրև գեղարվեստական մակդիր: Այստեղ հեղինակը ցանկացել է ցույց տալ Թորոս իշխանի հոգեկան վիճակը, նրա ապրումներն ու խոհերը, հույզերն ու մտորումները: Նա երագում էր այն երանելի օրվա մասին, որ ինքը «բանտե և շղթաներե» ազատված պիտի վերադառնար հայրենիք և հոր կործանված փլատակների վրա պիտի ծածանել տար հայկական դրոշակը: «Իր լուսալիր աչքերը հրալիր կը դառնային շանթահարելու համար իր կամաց ընդդիմահարները»: «Հրալից ամպը, որ ճակտին վրա կդիզվեր»: «Իր սուր միտքը փոխանակ շանթերու՝ թունավոր նետեր կարծակեր» («Թորոս Լևոնի», էջ 34): Ընդգծված մակդիրների միջոցով հեղինակը ձգտել է պատկերել Եվփիմեի հոգեկան ներաշխարհում տեղի ունեցող այն ավեկոծությունները, որ առաջացել էին Ռուբենի մահից հետո: Նրա «լուսալիր աչքերը» կրակով էին լցված և կարծես նրանցից յուրաքանչյուրը շանթեր էր արձակում թշնամու սիրտը խոցելու համար: «Խեղճ իշխանը երբեմն աչքը իրեն կը վերցնե, իբրև թե ողորմության փշրանք մը հայցելով նրա նայվածքեն» («Երկունք», 264): Հեղինակը բնութագրում է Անձևացյաց Մուշեղ իշխանին, որը վիրավորված պատերազմի դաշտից վերադառնալուց հետո աղերսում էր կնոջը՝ Հեղինեին, գեթ մի քաղցր ժպիտ կամ սիրալիր հայացք պարզել ամուսնուն, որպեսզի ամոքեր նրա ցավերը, բայց Հեղինեն անպատասխան է թողնում նրա խնդրանքը: Ծերենցի երկերում օգտագործված են ածականներով. օրինակ՝ լուսալիր դեմք, փառահեղ մորուք, նշուլագեղ աչոք, լուսալիր հայեցվածք, կրակե աչքեր, քաղցր լույս, պղնձե էակ, արծվի աչքեր, մագաղաթյա երեսներ, թունավոր աչքեր և այլն: Հեղինակի վեպերում կան նաև բառաբարդումների ձևով կազմված բովանդակալից և արտահայտիչ մակդիրներ, ահա դրանցից մի քանիսը՝ սայրասուր հայեցվածք, քաջակա-

ռույց կազմվածք, բոցավառ աչքեր, քաջակորով երիտասարդ, առյուծակորյուն, առյուծաթաթ, առյուծասիրտ. այս բոլոր մակդիրները գրողն օգտագործել է ընդգծելու համար իր հերոսների արտակարգ քաջությունն ու հզորությունը: Ծերենցի՝ թե՛ պարզ ածականներով և թե՛ բառաբարդումների ձևով կազմված մակդիրները չափազանց խոսուն են և իմաստալից. դրանք միջոց են դառնում բացահայտելու գործող անձանց էությունը: Հեղինակը խուսափել է անտեղի ու վերացական մակդիրներ կիրառելուց. նա ամեն կերպ ձգտել է դրանք օգտագործել տեղին՝ ընթերցողի մոտ առաջացնելով բնութագրվող անձի կամ երևույթի վերաբերյալ պարզ պատկերացում:

Ծերենցի վեպերում կան նաև այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք գործածված են ոչ թե ուղղակի, այլ փոխաբերական իմաստով: Այսպես՝ «...ինձ արև է շնորհում» կամ «արևը խավարեցուցիք» («Թորոս Լևոնի», էջ 14) արտահայտությունների մեջ «արևը» առաջին նախադասության մեջ գործածված է ազատություն բառի փոխարեն, այսինքն՝ Կոմեննոս կայսրի հրամանով ազատություն է շնորհվում Թորոս իշխանին, իսկ երկրորդ նախադասության մեջ «արևը» կիրառված է աչքեր իմաստով, այսինքն՝ Ռուբենի աչքերը կուրացնել տալով, կայսրը տանջամահ է անել տալիս նրան: «Առյուծներն ալ իրենց վիժածը ունին» («Թորոս Լևոնի», էջ 8): Փոխաբերական իմաստով գործածված այս նախադասության միջոցով հեղինակը ցանկացել է բնութագրել Թորոս իշխանին, թեպետ Կոմեննոսը անողորմ վարվեց նրա հոր և եղբոր նկատմամբ՝ անժամանակ կյանքից հեռացնելով նրանց, բայց հոգ չէ. Թորոսը, ժառանգելով իր հոր դյուցազնական հատկությունները, պիտի շարունակեր նրա հերոսական, անվեհեր գործունեությունը: «Ամեն լեզու գեղեցիկ աչքի մը կը նմանեցնեինի զայն, որ հանդարտ և լայնաբերան՝ վճիտ ջուր մը կը պոռթկար» (Նույն տեղում, էջ 75): Այստեղ «լեզուն» և «աչքը» գործածված են ոչ թե իրենց իսկական իմաստով, այլ փոխաբերական, գրողը այդ երկու կարևոր օրգանները նմանեցնում է գետնից բխող մի աննման աղբյուրի հետ, որից «վճիտ ջուր էր պոռթկում»: «Երկու փայլուն սլաք էին երկաթյա թափ կանցնեին, երբ նկատեին դիմացնին» («Երկունք», էջ 212): «Երկու փայլուն սլաք էին երկաթյա» ասելով, Ծերենցը նկատի ունի Հովնանին, նրա փայլուն և արտահայտիչ աչքերը, նրա հայացքն այնպես սուր և շեշտակի էր, որ իսկույն թափանցում էր մարդու հոգու մեջ և խոցում նրա սիրտը: Չափազանց բնութագրական և տիպական են Հովնանի մասին ասված արտահայտությունները. «երկաթե մարդ», «երկաթե կամք», «երկաթե զորություն», «երկաթե ձեռք», «երկաթե ջղեր» և այլն: Հաճախ կրկնելով «երկաթե» ածականը՝ հեղինակը ընթերցողի մեջ առանձնակի տրամադրություն է ստեղծում՝ նրան տեսնելու իբրև ընդհանրապես զորեղ մի անձնավորության, որն ունակ էր կատարելու խելահեղ սխրանքներ: Շատ հաճախ Ծերենցի մոտ փոխաբերությունները արտահայտիչ են դառնում

չափազանցությունների միջոցով: Հայրենադավ իշխանների արարքները դիպուկ բնորոշելու համար վիպասանը դիմել է հետևյալ չափազանցությանը. «Կը թողում հիշել մերուժաններ, վասակներ, գդիհոններ, որ ժողովրդյան արյան հեղեղներու և գերության պարճառ եղած են» («Երկունք», էջ 220): «Ժողովրդյան արյան հեղեղներու» արտահայտությունն անելով հեղինակը ձգտել է բացահայտել ազգադավ իշխանների վարած ստոր քաղաքականությունը, օտար բռնակալները դավաճանների միջոցով իրագործում էին իրենց ծրագրերը, հաճախակի արշավանքներ կազմակերպում Հայաստանի վրա և այնպես բնաջնջում ժողովրդին, որ «Տարոնո երկիրը արյանց լիճ մ'է եղած», - ասում է հեղինակը սրտի անհուն կսկիծով: «Ավելորդ է պարմել, թե ինչ ըրին Գուրգեն, Հովնան, Խոսրով և Աշոտ. իրենց քրտինքը թշնամվույն արյունին հետ խառնվեցավ և ձյունապար երկիրը չորս հարյուրի չափ դիակամբ ծածկվեցավ և կարմիր ներկվեցավ» («Երկունք», էջ 341): Այս չափազանցության միջոցով ընթերցողը ոչ միայն կարողանում է պարզ պատկերացում կազմել հայ քաջորդիների մղած հերոսական կռիվների և նրանց տարած հաղթանակների մասին, այլև տեսնել, թե ինչպես Գուրգենի, Հովնանի, Խոսրովի և Աշոտի ճակատներից հոսող քրտինքի կաթիլները գալիս և միախառնվում էին թշնամու թափած արյան հետ և ձյունով պատած դաշտերն ու անտառները կարմիր գույնով ներկում: «Այդ գեղեցիկ փոքրիկ ձեռքը յուր երկու ափերուն մեջ գրկելով՝ արտասված հեղեղներով կը լվանար» («Երկունք», էջ 296): «Դարձյալ արցունքներովդ յուր աչքերդ պիտի թրջես» (Նույն տեղում, էջ 352): «Աչքերը լիճ մը դարձած արտասված հեղեղներ կիջեցնեին» (Նույն տեղում, 227): «Արտասուքը գեպերեն աչքերեն իջեցնելով» (Նույն տեղում, էջ 255): Այս չափազանցություններին դիմելով՝ հեղինակը ցանկացել է բնութագրել Հովնանին, ցույց տալ նրա հոգու գեղեցկությունը, վեհությունը, մարդկային բարձր արժանիքները, Վասկանուշի նկատմամբ տածած նրա մաքուր և անբիծ զգացմունքները: Ամուր ու կայուն բնավորության տեր այդ մարդը երկար տարիների բաժանումից հետո, երբ առաջին անգամ հանդիպում է իր սիրած էակին, սկսում է երեխայի նման արտասվել և աչքերից գետի նման հոսող արցունքներով հեղեղել Վասկանուշի ձյունափայլ մարմինը: Ծերենցի կերպարներում մի անմեկնելի կարոտ, մի վեհացնող թախիժ կա: Նրանց էությունը պարուրված է լեռնային վճիտ աղբյուրի նման շոյող ու հմայող գեղեցկությամբ: Նրանց գրավիչ և արտահայտիչ աչքերում նկատելի է սիրո խորություն: Հեղինակի պատմելաճճ արտաքուստ թվում է, թե հանգիստ է, խաղաղ, բայց այդ երևութական անդորրի մեջ բացահայտվում են մարդկային ոգու նորանոր ծալքեր, ցնցող ապրումներ, ողբերգական իրողություններ:

Հովնանի և Վասկանուշի փոխադարձ սիրո ռոմանտիկ պատկերումը, ավատական հասարակական անարդար օրենքների հետևանքով սիրող

գույգերի երջանկության խորտակումը պատկերված են այնպիսի հուզականությամբ, որ ընթերցողի հոգում կարեկցանք, սեր և հույզ են առաջացնում: Ամեն մի երևույթ, մարդկային ամեն մի ողբերգություն տանջում է հեղինակի զգայուն հոգին: Վիպասանն ապրում է իր հերոսների կյանքով, իր հոգու միջոցով անցկացնում է նրանց վշտերն ու տառապանքները, բացահայտում հերոսների ներաշխարհում տեղի ունեցող փոթորկումներն ու ավեկոծումները, բայց գրողը կերպարներին ուժեղացնելու համար արհեստական կիրք և զգացմունք չի ներմուծում նրանց մեջ, սիրո անբնական տեսարաններ չի ստեղծում: Նրա ստեղծած պատկերների մեջ կա ազնվացնող և վեհացնող մի ռոմանտիկա:

Ծերենցի ոչ միայն կերտած կերպարներն են հմայիչ, այլև բնության պատկերները: Պետք է ասել, որ գրողի երկերում դժվար է գտնել բնության ձգձգված նկարագրություններ, ինչպես այն երբեմն նկատելի է Րաֆֆու ստեղծագործություններում: Վիպասանը ռոմանտիկ գույներով կենդանացնում է պատմական անցյալը, հինավուրց բերդերն ու հուշարձանները, աշխարհագրական բոլոր վայրերը, տալով նրա բնական գեղեցկությունը, լեռները, դաշտերը, գետերն ու լճերը... և այդ բոլորը ոչ ինքնանպատակ, այլ ծուլում է տեղի ունեցող դեպքերի հետ, օրգանապես կապում միմյանց հետ և բնությունն ու նրա մեջ ապրող և գործող կենդանի էակները մեկը մյուսին լրացնում են, ամբողջացնում, ստեղծում մի գեղեցիկ ներդաշնակությունը: *«Գուրգենը և Խոսրով իշխանը... երկրորդ օրը ելան փոքրիկ և գեղեցիկ գավառը շրջագայելու,- գրում է Ծերենցը,- փեսնելու մանր առվակներն ու վտակները, որ երբեմն սիրուն բլրակներե կիջնեն, երբեմն ահավոր լեռանց պարովաժներե և կերթան թորթումի գետը թափելու. փեղ-փեղ թուփեր և մայրաց անտառներ, փեղ-փեղ խորավետ ձորակներ, որ շարունակ կփոխվին: Հետո ահագին ապարաժներ ոմանք կամար-կամար ձևացյալ, ոմանք անճոռնի սեպացյալ մեկ կողմեն, և մյուսեն ծառերու, պարտեզներու և մարգագետիններու կանաչության սոսկում և զվարճություն աչաց կապարճառեին»* («Երկունք», էջ 366): Բերենք բնության սեղմ նկարագրությունից մի հատված ևս. *«Դիոնիսի կարգադրությամբ մեր հարսն ու փեսան հասարակ նավակ մը մտած Բաբկենով, երկու ծառայով և մեկ նաժիստով կանցնեին դիմացի Ասիո ծովափունքը, և ծովեզրեն մղոն մը հեռավորությամբ անտառախիտ ծառերի շրջապատյալ գյուղական ամայի տուն մը պարտասուր կը գտնեին գիրենք ընդունելու համար. հոն ինչ-որ բնության սքանչելիք կար, այս երկու գեղեցիկ անձանց ուրախությունը կը պսակեր. Բաբկեն իր լեռներուն գարունը կը հիշեր»* («Թորոս Լևոնի», էջ 44): Ինչպես տեսնում ենք, չափազանց ժլատ բնության այս պատկերը հեղինակը հղացել է Թորոսի և Եվփիմեի կյանքի երջանիկ օրերը հայրենի գեղատեսիլ բնության գրկում ցուցադրելու համար. հայրենի բնաշխարհը կարծես իր անսովոր գեղեցկությամբ փայլում էր նրանց առաջ, հրապուրանքի զգացում առաջացնում նրանց սրտերում, և, որքան մոտենում էին նրանք հայրենի

լեռնաշխարհին, այնքան ավելի բնության սքանչելի տեսարաններ էին բացվում նրանց առջև:

Թե՛ կերպարներ կերտելիս, թե՛ բնություն նկարագրելիս և թե՛ գեղարվեստական պատկերներ ստեղծելիս հեղինակը կիրառել է լեզվաոճական բազմաթիվ միջոցներ, որոնց մեջ ամենահիմնականը արխայիզմների (իմա՝ հնաբանություն) և գրաբարի օգտագործումն է: Աշխարհաբար գրական լեզվի զարգացման և հարստացման համար Ծերենցը հիմնական ակունքներ է համարել երկուսը՝ նախ՝ ժողովրդական հարուստ բառ ու բանը, բարբառները, ապա գրաբարի արդեն «աշխարհաբարացած» և «աշխարհաբարացման» ճանապարհին ընկած հարուստ բառապաշարը: «Ծերենց իր աշխարհաբարով, որ չունի գրաբարեն փոխանցված խառնուրդի մը ծանրությունը,- գրում է Մ. Ճանաշյանը,- գրական ու ծաղկյալ լեզու մըն է, հարթ, սահուն, թեև քիչ մը նվազ բանաստեղծական շնչով, կպահե տակավին իր թարմությունը՝ հետևաբար իր արժեքը, ունի ճաշակ, չափակցություն, զգացում, դատողություն և երևակայություն, որուն զորությամբ կը ստեղծե գրավիչ տեսարաններ» [6, էջ 260]:

Ինչպես տեսնում ենք, Մ. Ճանաշյանը բավական բարձր կարծիք է հայտնել Ծերենցի լեզվի մասին. ընդունելով հանդերձ, որ գրողն ունի «դատելու», «երևակայելու» և գեղարվեստական պատկերներ ստեղծելու մեծ կարողություն, այնուամենայնիվ չենք կարող համաձայնել գրականագետի արտահայտած այն մտքին, որ «Ծերենցի լեզուն չունի գրաբարեն փոխանցված խառնուրդի մը ծանրությունը»: Մեր բոլոր պատմավիպասաններն իրենց երկերում տվել են մեր դարավոր լեզվի հարստությունը, գեղեցկությունը և ճկունությունը: Դարաշրջանի առավել հնչեղ պատկերման, կերպարների գործունեության առավել բնորոշ և կոլորիտային արտացոլման նպատակով նրանք կիրառել են արխայիզմների և գրաբարի տարրեր:

Ծերենցը նույնպես իր վեպերում գործածել է գրաբարյան բառեր, դարձվածքներ, արխայիզմներ: Բայց Ծերենցի երկերը, ավելի քան որևէ մի այլ պատմավիպասանի ստեղծագործություններ, խաթարված են գրաբարյան ոճական բազմաթիվ արտահայտություններով, գրաբարյան հոլովման և խոնարհման բազում ձևերով, հնացած, վաղուց արդեն գործածությունից դուրս ընկած բառերով, որոնց անհարկի օգտագործումը չէր կարող բացասաբար չանդրադառնալ վիպասանի լեզվի վրա: Ճիշտ է՝ գրողի վեպերում կան գրաբարյան այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք էական նշանակություն ունենալու հետ միասին ունեն նաև նշանակալից իմաստ՝ ընթերցողի երևակայության մեջ պատմականության պատրանք առաջացնելու առումով, բայց և այնպես վիպասանի երկերում այնքան շատ են անհարկի գործածված գրաբար բառերն ու ոճական արտահայտությունները, պատմիչների երկերից թափանցած ամբողջական հատվածներն ու նախադասությունները, որ իջեցնում են գրողի պատմական երկերի լեզվական արժեքը. ավելին՝ ընթերցող լայն

շրջանների համար նրա վեպերը դառնում են դժվարընթեռնելի և դժվարամարս: Այսպես, օրինակ, արդի ընթերցող հասարակության համար անհասկանալի են հետևյալ գրաքարյան բառերը՝ *կենոք, զկերողս, ճապաղյաց, ընդոստուցյալ, կահմանց, առնուր, պշուցյալ, պերճացյալ, պար առյալ, խելաբրել, ճառադանք, նկուն, հափափյալ, փաղանք, սկրդել, աչագրավ, սակի, ավրշպել, հանձանձիչ, ստերդուն* և այլ շատ բառեր: Ինչպես գիտենք, աշխարհաբարի հոլովման և խոնարհման համակարգը բոլորովին տարբեր է գրաբարից, և եթե հեղինակն իր երկերում կիրառել է այդպիսի ձևեր, ուրեմն նա հակասել է գրական լեզվի քերականական օրինաչափություններին: Ծերենցի երկերում առկա են բազմաթիվ գրաբարյան հոլովման և խոնարհման ձևեր: Հեղինակի օգտագործած քերականական ձևերի մեծ մասը -ք վերջավորությամբ կազմված բառեր են: Այսպես, օրինակ, *հարգապատիվք, ամենապայծառք, ամենակատարյալք, ամենաազնվականք, անդամք, ակնածողք, խոստմունք, նախադանք, նախարարք, ոչխարոք, արջառոք, ցորենոք, ընծայիվք, պաշտոնյայք, անապատականք, քրիստոնյայք*:

Ծերենցը զգալի չափով գործածել է նաև գրաբարի սեռական հոլովածներ՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով, ինչպես, օրինակ, *գեղեցկությանց, կատարելությանց, արտասվաց, կանոնաց, մտաց, ծննդոց, ապականությանց, մեծամեծաց, արյանց, զորաց, հիմանց, շրթանց, չարագործաց, միամտաց, հրեշտակաց* և այլն: Բավական շատ են Ծերենցի երկերում կիրաված գրաբարի խոնարհման բայածները, մասնավորապես անցյալ կատարյալ ժամանակով արտահայտված ձևերը, ինչպես, օրինակ, *համարձակեցավ, պատերազմեցավ, ցրվեցան, շրջագայեցավ, հարսնացավ, հարձակեցավ, հուսահատեցավ, հնազանդեցավ, ժպտեցավ, արթնացավ* և այլն:

Այս բոլորին զուգընթաց՝ Ծերենցի վեպերում հանդիպում են գրաբարով արտահայտված ամբողջական նախադասություններ, որոնք գեղարվեստական մշակման և ընդհանրացման չեն ենթարկված: Այս երևույթը նույնպես բացասաբար է անդրադարձել գրողի լեզվի վրա, քանի որ գրաբարով արտահայտված նախադասությունները չեն ներդաշնակվել գրողի բանաստեղծական ճաշակին և մասնավորապես նրա լեզվական մշակույթին: Այսպես. «Ի՞նչ ըրին հայ նախարարք, մենք չենք ուզեր դատել, այլ ահա մեջտեղ կը դնենք ժամանակակից պատմագրի խոսքերը», - ասում է հեղինակը: «*Իսկ իշխանք հայոց որ ի Յունաց և ի Տաճկաց կողմանէ, Համազասպ և Մուշեղ, և այլը ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արինահեղութիւն, և անցուցին խաղաղութեամբ զաւուրս ծմերայնւոյն, զի և զշինականս ապրեցուցանեն: Քանզի Ռշտունեաց Տէրն անկաւ Աղթամար կղզին*» («Թորոս Ռշտունի», էջ 635): Կամ մի այլ նախադասություն. «*Ես աստ էր տեսնել զաղէփս փարակուսի, զօրէն հիւանդաց յորժամ*

տագնապեցին ցաւն և հաւրանիցէ ի խօսից, այնպէս ինչ եղեն, զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի և թագստեան և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս որ չի անկցի ի ծով՝ և ոչ կարիցէ գտանել» (Նույն տեղում, էջ 636): Մատթեոս Ուռհայեցուց մեջբերում է. «... նոցա շատ անհրաժեշտութիւնները կուզէի գրել, բայց չի համարձակեցա, վասնզի նոցա իշխանության ներքև էինք» («Թորոս Լևոնի», էջ 147):

Ընդհանրացնելով կարելի է ասել՝ Ծերենցի խոսքարվեստի քննութեամբ պարզել ենք, որ նրա ոճի ամենաբնորոշ հատկանիշը հնաբանությունն է:

References

1. Ավետիսյան Զ., Գրականության տեսություն, Երևան, «Նաիրի» հրատ., 1998:
2. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:
3. ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 11:
4. Եզեկյան Լ. Կ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Երևան, ԵՊՀ հրատ., 1990:
5. Ծերենց, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1957:
6. Ճանաչյան Մ., «Պատմություն արդի հայ գրականության», հ. 1, Վենետիկ, տպ. Մխիթարյան, 1953:
7. Նանումյան Ռ., Ծերենց, Կեանքը և գործը, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ. 1986:
8. Շիրվանզադե Ա., Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Հայպետհրատ, 1955:
9. Французские писатели о литературе, Москва, 1978: